

ՕՐՀՆՈՒՄԸ ԵՂԻՄ

(Հնդկական առասպել)

ՀԵՆՐԻԽ ՍԵԿԵԽԻՉԻ

Մի լուսնկալ պարզ գիշեր իմաստուն և մեծ կրի-
շնան խօրը մտածելուց լետոյ՝ ասաց.

Կարծում էի, թէ մարդը աշխարհիս ամենալաւ-
տրարածն է,—բայց, աւաղ, սխալուել եմ: Ահա առջես
է լոտոսի ծաղիկը, որ հանգարտ շարժւում է գիշերտ-
ին մեղմ զեփիւռից: Ո՛չ, ինչքան գեղեցիկ է նա բոլոր
կենդանի արարածներից: Նորա քնքուշ տերևնեկները
բացուեցան լուսնի արծաթափալ լուսի տակ—և իմ
հայեցքս չէ հեռանում նորանից...

—Ալո՞ւ, մարդկանց մէջ ալդպիսի բան չկալ,—կրկնեց
նա ախ քաշելով:

Բայց մի ըոպէից լետոյ կրիշնան մտածեց.

«Սակայն ինչո՞ւ ես, աստուածօ, իմ աստուածալին
կամքի ոլժով չստեղծեմ ալնպիսի մի արարած, որ մարդ-
կանց մէջ լինէր նոյնը, ինչ որ լոտոսն է ծաղիկների
մէջ: Թո՞ղ ուրեմն կատարուի ալդ լուրախութիւն մարդ-
կանց և երկրի: Լոտոս, փոխարկուիր կենդանի կոյսի և
կանգնիր իմ առաջ:

Եւ իսկոյն մեղմ կերպով ծածանեց ալիքը, կարծես
ծիծեռնակի թևերի շարժումով, գիշերը առաւել պար-
ծառացաւ, լուսինը աւելի պայծառ փալեց երկնքում,
գիշերալին մշահաւերը սկսան աւելի բարձր երգել, իսկ

ապա յանկարծ լուեցին, և ահա հրաշք կատարուեց. մեծին
կը իշխալի առաջ ներկալացաւ լոտոսը մարդու կերպա-
րանքով. երիտասարդ կուսի տեսքում:

Նորա տեսքից ինքը աստուածն էլ զմալլեցաւ:

—Դու լճի ծաղիկ էիր,—ասաց նա,—եղի՞ր ալժմ
իմ մտքերիս ծաղիկը... և խօսիր:

Եւ երիտասարդ կոլոր սկսաւ շշնչալ ալնպէս հան-
դարտ, ինչպէս լոտոսի սպիտակ տերևները, քնքուշ
գեղիւովից ողջագուրուելիս:

—Տէր, դու ինձ փոխարկեցիր կենդանի էակի. ալժմ
աւը կպատուիրես ինձ բնակուելու Առաջ, երբ ես ծաղիկ
էի, դողում էի և տերևներս ծալրում էի հողմի ամեն
մի փչելու ժամանակ: Ինձ սարսափեցնում էին հեղեղ-
ներն ու փոթորիկները, սարսափեցնում էին որոտն ու
կալծակը, սարսափեցնում էին անգամ արևի ալրող ճա-
ռագալթները: Դու ինձ հրամայեցիր լոտոսի մարմնա-
ցումը լինել կուսի կերպարանքով, և ահա ես պահպա-
նեցի իմ բնութիւնը և ալժմ ինձ երկիւղ է ազգում եր-
կիրը և նորա վերալի բոլոր բաները... Ուր ես հրամա-
յում ինձ որ բնակուեմ:

Մեծն կը իշխան իւր իմաստուն հալեացքներն ուղղեց
գէպի աստղերը և մի վալրկեան մտածելուց լետոյ՝
հարցրեց.

—Ուզում ես ապրել լեռների գագաթներին:

—Այնտեղ ձիւն է և ցուրտ, տէր, վախենում եմ:

—Ուրեմն բիւրեղեալ մի հրաշալի ապարանք կշնեմ
քեզ համար լճի լատակի վերալ:

—Ձի՞ խորքում զարհուրելի ձկներ և ուրիշ հրէշ-
ներ են բնակւում. ես վախենում եմ նոցանից, տէր:

—Կկամեննաս ապրել ամալի անապատում:

—Ո՛հ, տէր. ալնտեղ լաճախ փոթորիկ ու հողմ է
լինում:

—Եհ, ինչ անեմ քեզ, ալ ծաղիկ, որ մատաղ կու-

սի ես փոխարկուել... Հա. Ելլօրաի անձաւներում սուրբ անապատականներ են կենում... կուզես աշխարհից հեռու անձաւում բնակուել:

— Այնտեղ մութն է, տէր. վախենում եմ:

Կրիշնան նստեց քարի վերայ և մտածմունքի մէջ խորասուզուած գլուխը կախեց ձեռների վերայ: Կոլու կանգնած էր նորա առաջ, դողալով և վախեցած:

Այդ միջոցներին արևելքում երևաց արշալուսը և իւր ճառագալթներով լուսաւորեց երկինքն ու երկիրը: Նա ոսկէզօծեց լճակի հայելանման մակերևոյթը, բարձր արմաւենիներն ու բամբուկները:

Եւ իսկոյն ջրերի վերայ լսուեցին վարդագոյն ձկնուկների, կապոյտ արագիլների և սպիտակ կարապների, իսկ անտառներում—ալսպղուն սիրամարգների ձայները: Այս բազմազան ձայների խմբին միացան մարդարտաքել խեցիկ վերայ ձգուած լարերի նուագները և մարդկային երգի խօսքերը:

Կրիշնան դուրս եկաւ մտածմունքից և ասաց.

— Վալլմիկի բանաստեղծն է ալս, որ արևի ծագումն է ողջունում:

— Մի ըոսկէից բացուեցան պատաղիճները ծածկող ծիրանեգոյն ծաղիկների դրասանգները, և լճի ափին երևաց Վալլմիկին:

Անսպասելի կերպով տեսնելով իւր առաջ սքանչելի կուսին, նա լուեց և թողեց իւր երգը: Մարդարտաքեր խեցին կամացուկ դուրս սլքուեց նորա ձեռքերից, և նա շացած հրաշալի տեսիլքից, կանգնեց անշարժ, կարծես մեծն Կրիշնան գետափնեալ ծառի էր փոխարկել նորան:

Աստծուն ցնծութիւն սպատճառեց իւր ստեղծուածի ալս համբ հիացքը. և ասաց.

— Ուշքի արի, Վալլմիկի, և խօսիր:

Ես Վալլմիկին ասաց.

... Սիրում եմ...

Այս մի խօսքը միայն լիշեց նա և միայն այս մի խօսքը կարողացաւ արտասանել:

Եւ մէկ էլ լանկարծ Կրիշնաի դէմքը պալձառացաւ:

— Հրաշալի՛ կուս,— տսաց նա, — Ես քեզ համար արժանաւոր տեղ գտայ. տեղաւորութիր բանաստեղծի սրտում:
Իսկ Վալլմիկին մի անգամ էլ կրկնեց.

...Սիրում եմ...

Ամենազօր Կրիշնաի կամքը, հզօր աստուածութեան կամքը անզուսպ կերպով ձգեց կուսին դէպի բանաստեղծի սիրտը: Այս իսկ ժամանակ աստուած Վալլմիկիի սիրտը դարձրեց թափանցիկ, ինչպէս բիւրեղ:

Փայլուն ինչպէս ամառուան օրը, հանդարտ ինչպէս մեծն Գանգէսի ալիքը, դիմեց կոլսը իւր համար նշանակուած ապաստանարանը: Բայց երբ նորա հալեացք-ները խորը թափանցեցին բանաստեղծի սրտում, նորա դէմքը լանկարծ գունատուեց, և լուզը պատեց նորան, կարծես սառը հողմ էր փչել վրէն: Իսկ մեծն Կրիշնան զարմացաւ:

— Մարդու կերպարանքով ծաղիկ, — հարցրեց նա,
— միթէ բանաստեղծի սիրտն անգամ վախեցնում է քեզ:

— Տէր, — պատասխանեց կոլսը, — օ՛հ, ինչպիսի ապաստանարան ընտրեցիր դու ինձ համար: Սորանում, միմիալն այս սրտում իմ աչքերս տեսան և' ձիւնապատլեռների գագաթներ, և ծովերի լատակները, լի զար-հուրելի էակներով, և' հողմերով ու փոթորիկներով լի ամալի անապատներն, և' էլլօրալի խաւար անձաւները... և իմ հոգին լցուեցաւ լուզմունքով:

Սակալն բարի և իմաստուն Կրիշնան խօսեց.

— Հանգստացի՛ր, ծաղիկ, որ կոլսի ես փոխարիկուած: Երբ Վալլմիկի սրտում հալչի անմեկին ձիւնը, դու եղիք դարնան ջերմ շունչը, որ կը հալեցնէ նորան. եթէ այն-տեղ ծովի լատակ է, դու մարդարիտը եղիք նորանում,

Եթէ ալնտեղ ամալի անմարդաբնակ անապատ է, դու
ցանիր նոցանում երջանկութեան ծաղիկներ. Եթէ ալն-
տեղ լինին Ելլօրալի խաւար անձաւներ, դու ալդ խա-
ւարում բարերար արևի պայծառ ճառագալթն եղիք...

Իսկ Վալլմիկին աւելացըց.

—Եւ օրհնուած եղիք:

Թարգմ օր. Կ ՌԻՍՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

